Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերին ուղղված դրամաշնորհային աջակցության շրջանակներում կայացավ «ՀՀ Կոտայքի և Լոռու մարզերում երեխաների համար նախատեսված խաղահրապարակների բարեկարգման» ծրագրի պայմանագրի ստորագրման արարողությունը

2018 թվականի մարտի 7-ին, ՀՀ Կոտայքի մարզի Կամարիս համայնքում կայացավ «ՀՀ Կոտայքի և Լոռու մարզերում երեխաների համար նախատեսված խաղահրապարակների բարեկարգման» ծրագրի պայմանագրի ստորագրման արարողությունը՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերին ուղղված դրամաշնորհային աջակցության շրջանակներում:Արարողությանը ներկա էին ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Էյջի Տագուչին, ինչպես նաև «Շենացնենք մեր գյուղը» ՀԿ-ի նախագահ տիկին Անահիտ Թովմասյանը, «Մարդու իրավունքների միջազգային հասարակություն» ՀԿ-ի նախագահ տիկին Բելլա Շիգարյանը, ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալներ պարոն Կարեն Մարգարյանը և պարոն Համլետ Հայրապետյանը, Ստեփանավանի համայնքապետի խորհրդական պարոն Լևոն Քալանթարյանը, ինչպես նաև մի շարք համայնքապետեր և շահառու մանկապարտեզների տնօրեններ:

Ծրագրի նպատակն է բարեկարգել երեխաների համար նախատեսված խաղահրապարակները ՀՀ Կոտայքի մարզի չորս մանկապարտեզներում և ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի կենտրոնական այգում: Ճապոնիայի կառավարությունը աջակցում է խաղահրապարակների սարքավորումների ձեռքբերման և տեղադրման գործում: «Մարդու իրավունքների միջազգային հասարակություն» ՀԿ-ի հետ համատեղ շահառուն կիրականացնի այս ծրագիրը՝ գյուղական համայնքներում շուրջ 3230 երեխաների կյանքի պայմանները և կրթական միջավայրը բարելավելու նպատակով:

Ծրագրի անունը՝ ՀՀ Կոտայքի և Լոռու մարզերում երեխաների համար նախատեսված խաղահրապարակների բարեկարգման ծրագիր
(ՀՀ Կոտայքի մարզի Կամարիս, Քասախ, Բջնի, Զովունի համայնքներ/ ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաք)

Շահառու՝ «Շենացնենք մեր գյուղը» ՀԿ / Ծրագիրն իրականացնող գործընկեր՝ «Մարդու իրավունքների միջազգային հասարակություն» ՀԿ

Դրամաշնորհի չափը՝ 44,768 ԱՄՆ դոլար (4,924,480 ճապոնական յեն)

Դրամաշնորհի պայմանագրի ստորագրման ամսաթիվը՝ Մարտի 7, 2018

Երեխաների կողմից ավանդական ընդունելության արարողություն

Երեխաների ողջույնի ելույթը

«Շենացնենք մեր գյուղը» ՀԿ-ի նախագահ տիկին Թովմասյանի ողջույնի խոսքը

Դեսպան Տագուչիի շնորհավորական ուղերձը

Դրամաշնորհի պայմանագրի ստորագրումը

Դեսպան Տագուչիի և տիկին Թովմասյանի ամուր ձեռքսեղմումը

«Մարդու իրավունքների միջազգային հասարակություն» ՀԿ-ի նախագահ տիկին Շիգարյանի խոսքը

ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ պարոն Մարգարյանի խոսքը

Ծրագրի իրականացման տեղայնքներից մեկը (Կամարիս գյուղի մանկապարտեզին կից)